

Լյուդվիգ Գ. Վարդանյան,  
*Փիլ. գիյր. թեկնածու*

Խաչիկ Ա. Մակյան

**ԳԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ»  
ԵԶՐՈՒՅԹԻ ԾԱԳՄԱՆ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ\***

**Բանալի բառեր** – քաղաքական մշակույթ, քաղաքական համակարգ, քաղաքական ինստիտուտ, քաղաքականություն, քաղաքական գիտակցություն, քաղաքական կողմնորոշում, քաղաքական վարքագիծ:

**Մուտք**

Անհատների և սոցիալական խմբերի ընդգրկումը քաղաքականության մեջ պայմանավորված է սոցիալական կարևորության տեսանկյունից ձևավորված շահերի իրացման ձգտումով: Դրանց իրացման փորձերը տեղի են ունենում ոչ ուղղակի կերպով, այլ միջնորդավորված են նորմերով ու արժեքներով, որոնցով քաղաքականության սուբյեկտները պայմանավորում են իրենց հարաբերությունները քաղաքական ինստիտուտների, քաղաքական վերնախավի (էլիտայի) և առհասարակ՝ իշխանության հետ:

Քաղաքականությունը միայն օբյեկտիվ գործոնների աշխարհ չէ (քաղաքական ինստիտուտներ, կազմակերպություններ, քաղաքական հարաբերություններ և կապեր, քաղաքական արժեքներ, որոշումների ընդունման ընթացակարգեր, դերակատարների վարքագծի նորմեր, միջեր, ավանդույթներ և այլն), որն ընկալվում է որպես որոշակիորեն տրված քաղաքական իրողություն: Անմիջականորեն դիտարկվող նման քաղաքական արտեֆակտերի՝ աշխարհի (օբյեկտիվ աշխարհի) հետ միասին գոյություն ունի արտաքուստ թաքնված աշխարհ՝ ներքին դատողությունների և իմաստների աշխարհ, քաղաքական ինստիտուտների և երևույթների վերաբերյալ սուբյեկտիվ մտադրություններ և անձնական պատկերացումներ, շնորհիվ որոնց՝ քաղաքական իրողությունը գոյություն ունի, կառուցա-

\* Հղվածն ընդունվել է տպագրության 20.10.2016:

1 **Արտեֆակտ** (լատ. artefactum, arte – արհեստական, factum – արված) – արհեստականորեն, ոչ բնականորեն ստեղծված, մարդկային գործունեության արդյունք:

կարգվում և փոփոխվում է: Դա պատկերացումների, գիտելիքների, խորհրդանիշերի աշխարհ է, որը թույլ է տալիս անհատին հասկանալ քաղաքական այլ դերակատարների գործողությունները և կողմնորոշվել քաղաքական կյանքում՝ կազմելով քաղաքականության սուբյեկտիվ աշխարհը, որը անհասանելի է անմիջական դիտարկմանը: Հենց դրա հիման վրա է ձևավորվում գոյություն ունեցող քաղաքական կարգի և անհատական հարաբերության ընթացման որոշակի եղանակը՝ նրա քաղաքական ինստիտուտների վերաբերյալ, տեղի է ունենում քաղաքականության մեջ սեփական տեղի գիտակցումը: Ահա և քաղաքականության այս երկու աշխարհների փոխհարաբերության խնդիրների իմաստն ու արժեքները պայմանավորված են, մեր կարծիքով, հասարակությունում տիրապետող **քաղաքական մշակույթով**: Այլ կերպ՝ **նորմատիվ-արժեքային համակարգով, որով ուղղորդվում է բնակչության մեծ մասը, և որը գոյություն ունի, ընդունված և տարածված է վարքագծի, քաղաքական արժեքների ու իդեալների տեսքով**: Հենց այս առումով էլ քաղաքական մշակույթը սահմանում է իշխանության, անհատի և հասարակության քաղաքական վարքագծի առավել տիպիկ օրինակներ ու կարգ: Ակնհայտ է, որ քաղաքական պատկերացումները բազմազան են, քանի որ ոչ միանշանակ է քաղաքական իրականությունը, և դրա կրողները մշակույթի, մենթալականության<sup>2</sup> տարբեր մակարդակներ ունեցող սուբյեկտներ են: Բնական է, որ այդ սուբյեկտների պատկերացումները բախվում են իրար՝ ծնելով սուր քաղաքական պայքար: Քաղաքականությունը, ինչպես նշում է Արիստոտելը, մարդկանց կարգավորված հաղորդակցությունն է՝ շփումը, որը «քաղաքական» է դառնում սոցիալական «ամբողջի» և առանձին «մասերի» միջև հարաբերությունների ներդաշնակության ուժով, որտեղ պարտադիր է կարգավորող սկիզբը կամ իշխանության մեխանիզմը: Քաղաքական աշխարհում մարդը հաճախ փորձում է խանդավառություն հաղորդել իր շփումներին՝ դրսևորելով որոշակի սովորույթներ ու նախապաշարմունքներ, վստահում կամ քննադատում է իշխանությանը հատկապես ձգնաժամերի և ընտրությունների ժամանակ: Մարդու բնույթի նման դրսևորումը ոչ միայն ծառայում է որպես քաղաքական կառույցների և հարաբերությունների վերափոխման կարևորագույն գործոններից մեկը, այլև ստիպում է իշխանությանը վերադասավորել իր ողջ համակարգը: Հետևապես, զարմանալի չէ, որ տարբեր երկրներում նույն գործառույթները կատարող ինստիտուտներն աչքի են ընկնում գործունեության և զարգացման առանձնահատուկ գծերով: Դեռ ավելին, քաղաքական համակարգը երբեմն սկսում է վերադասավորվել, իսկ դա նշանակում է, որ այն հանդես է գալիս որպես **կախյալ փոփոխական**, որի վրա ազդում են տվյալ հասարակության առանձնահատուկ գծերը: Այսինքն՝ քաղաքական պայքարի պայմաններում կամ քաղաքական ինստիտուտների գործառույթների իրացման առումով հասարակության պահպանումն ու կայունությունը կարող է ապահովվել նոր սերնդի կող-

2 **Մենթալիտետ** (լատ. mens, mentis – միտք, բանականություն) – ընդհանուր մտածելակերպ, գիտակցության առանձնահատկություն, որն է ընդհանրության, հանրույթի հոգեբանական և բարոյական նախատրամադրվածություն, նախահակվածություն: Մենթալիտետը աշխարհընկալման կայուն եղանակ է, որը միավորում է ռացիոնալ, հուզական, արժեքային և այլ հայացքներ, նորմեր և կարծրատիպեր:

մից քաղաքական դերերի և գործառույթների յուրացմամբ, ընդունմամբ, որոնք վերագրվում են հասարակությունում տիրապետող քաղաքական մշակույթի իդեալներին և արժեքներին: Այլ ձևակերպմամբ, եթե քաղաքական համակարգը իր վերադասավորումներով կարող է հանդես գալ որպես կախյալ փոփոխական, ապա որոշակի ժամանակաշրջանում (միգուցե երկար տարիների ընթացքում) ձևավորված քաղաքական մշակույթը կարելի է համարել **անկախ փոփոխական**:

Յուրաքանչյուր հասարակության քաղաքական մշակույթը միահյուսվում է առավել բարձր մշակութային կազմավորմանը՝ քաղաքակրթությանը, որը հանդես է գալիս որպես որոշակի պատմական փորձի արդյունք: Կարելի է համաձայնել որոշ հետազոտողների հետ, որ «քաղաքական մշակույթ» եզրույթի մեկնաբանման համար կարելի է օգտագործել կոնտինում<sup>3</sup> եզրույթը, որը, օրինակ, մաթեմատիկայում նշանակում է բոլոր առարկայական թվերի բազմության հզորություն (կամ արմատական թիվ, նման բազմությունների դաս), ֆիզիկայում՝ համատարած միջավայր, որի հատկությունը ժամանակի ընթացքում մշտապես փոփոխվում է տարածության մեջ՝ տարածաժամանակային կոնտինում: Քաղաքական մշակույթը՝ որպես յուրահատուկ տարածաժամանակային կոնտինում, ինչ-որ ընդհանրության պատմաքաղաքական զարգացման հաջորդականության, ժառանգորդության և նրա քաղաքական մոդելների հնարավոր տարածում է<sup>4</sup>:

## 1. «Քաղաքական մշակույթ» եզրույթը. պատմություն և արդիականություն

Հետազոտողները վաղուց են գիտակցել, որ ուսումնասիրելով մարդկանց սուբյեկտիվ վերաբերմունքը քաղաքական աշխարհի, նրա ենթահամակարգերի, արժեքների, առասպելաբանության (միֆոլոգիայի), խորհրդանիշների (սիմվոլների), մենթալիտետի և այլնի նկատմամբ, հնարավոր է խորապես հասկանալ քաղաքացիների և ինստիտուտների քաղաքական վարքագծի շարժառիթները, պարզել տարբեր կոնֆլիկտների պատճառները՝ ելնելով քաղաքականության համար արդեն իսկ ավանդական դարձած պատճառներից՝ պայքար իշխանության և ռեսուրսների վերաբաշխման համար և այլն: Քաղաքականության աշխարհը միշտ փոփոխական ու դինամիկ է՝ շնորհիվ քաղաքական սուբյեկտի (անհատի, սոցիալական խմբի) գիտակցությունում գոյություն ունեցող ցանկալի և իրական աշխարհների միջև անհամապատասխանության: Այս ամենը, մեր կարծիքով, կարևորում է քաղաքական մշակույթի կայացման, զարգացման և դրսևորման խնդիրները:

Համաշխարհային փիլիսոփայական, մշակութաբանական, քաղաքագիտական գրականության մեջ գոյություն ունեն քաղաքական մշակույթի

3 «Կոնտինում» (լատ. continuo – անընդհատ, առանց դադարի շարունակել) եզրույթը հաճախ փոխարինում են իր նշանակությամբ նրա հետ համընկնող «անընդհատություն» եզրույթով: Կոնտինումի սկզբունքը հակադիր է ատոմիզմին:

4 Sևս Категории политической науки. Учебник. – М.: Московский государственный институт международных отношений (Университет); «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2002. с. 481. **Катасонов В.Н.** Непрерывность и прерывность // Новая философская энциклопедия в 4 т. / Ин-т философии РАН; Нац-обществ.-науч. фонд; Предс. научн. совета **В.С. Степин.** 2-изд.

քաղաքակրթական մեկնաբանություններ, սահմանումներ և բնութագրումներ<sup>5</sup>: Իհարկե, չունենալով տվյալ հիմնախնդրի պատմափիլիսոփայական հետազոտման նպատակ՝ ցանկանում ենք ընդգծել, որ որպես հասարակական երևույթ՝ քաղաքական մշակույթը ծագել է ավելի վաղ, քան հանդես է եկել «քաղաքական մշակույթ» եզրույթը: Քաղաքական մշակույթի հանդես գալը, նրա առանձնացումը որպես մարդկային մշակույթի յուրահատուկ տեսակ, կապված է պետության, քաղաքականության և հասարակության քաղաքական կյանքի կառավարման վերաբերյալ համակարգված գիտելիքի ծագման հետ: Հետևաբար, քաղաքական կյանքի առանձնահատուկ ուսումնասիրությունը, այսինքն՝ նրա մշակույթային յուրացումը սկսվել է դեռևս վաղ ժամանակներից, հատկապես Հին Հունաստանում, որն իր արտացոլումն է գտել Հերոդոտոսի, Թուկիդիդեսի պատմական աշխատություններում, Քսենոփոնի պամֆլետներում (պարսավագրերում), Պլատոնի, Արիստոտելի և այլոց աշխատություններում: Ամերիկյան քաղաքագետ Գաբրիել Օլմոնդը<sup>6</sup>, հղում անելով Աստվածաշնչին, Պլատոնի, Արիստոտելի, Հին Հունաստանի և Հին Հռոմի այլ մտածողների աշխատանքներին, նշում է, որ «քաղաքական մշակույթ» եզրույթին ինչ-որ մոտ բան՝ հղացք (concept), օգտագործվել է այնքան վաղ, երբ մարդիկ սկսել են խոսել և գրել քաղաքականության մասին<sup>7</sup>: Քաղաքական մշակույթին մոտ եզրույթներ կարող են համարվել նաև Հին Արևելքի հասարակական կյանքում օգտագործվող որոշ կատեգորիաներ՝ հին չինական ավանդույթում՝ «ժենը» և «ժեն չժենը», հին հնդկական ավանդույթում՝ «դհարման»<sup>8</sup> և այլն: Այսպես, հին չինական «ժեն» եզրույթը ընդգծում է մարդկային որակի հիմնական տարբերիչը, կազմելով միջանձնային, միջմարդկային հարաբերությունների հիմքը և ընդգրկելով ամբողջ տիեզերքը, մեկնաբանվում է ոչ միայն որպես մարդասիրություն, մարդկային սկիզբ, սեր, այլև որպես բանականություն: Իսկ «ժեն չժեն» եզրույթը մեկնաբանվում և ըմբռնվում է որպես մարդասեր, մարդկային քաղաքականություն, բանական քաղաքականություն, իշխանության իրականացման միակ ձևարիտ և համընդհանուր սկզբունք<sup>9</sup>: Հին հնդկական «դհարմա» եզրույթը նշանակում էր ինչ-որ դրական օրինակ, հավերժ բարոյական օրենք, որին պետք է հետևել որպես նորմ<sup>10</sup>: Հին Հունաստանում «մշակույթ» հասկացության փոխարեն օգտագործվել են «պայդեյա» և «կալոկագաթիա» հասկացությունները, որոնք արտահայտել են մարդու կրթվածությունը, դաստիարակվածությունը, ֆիզիկական գեղեցկությունը, վարքի ընդհանուր կանոնների և մարդկանց փոխհարաբերությունների պահպանումը:

5 Տե՛ս **Kroeber A.L., Kluckhohn C.** Culture: a critical Review of Concepts and Definitions. New York, 1952; **Штраерман Е.М.** Проблемы культуры в западной социологии // Вопросы философии, 1967, '1. Соколов **Э.В.** **Культура** и личность. Л., 1972.

6 Գաբրիել Օլմոնդ [Almond (1911-2002)] – ամերիկյան ականավոր քաղաքագետ, որի աշխատանքները քաղաքական համակարգի և մշակույթի համեմատական հետազոտությունների բնագավառներում համարվում են դասական:

7 Տե՛ս **Смирнов В.В.**, «Круглый стол» по проблемам политической культуры // Политические отношения: прогнозирование и планирование: Ежегодник Советской ассоциации политических наук, 1977. М., 1979, с. 126.

8 Տե՛ս **Гомеров И.Н.** Политическая культура: лекции / Новосиб. гос. ун-т. Новосибирск. 2012. с. 3.

9 Տե՛ս Философский энциклопедический словарь. М., 1983. с. 187.

10 Տե՛ս История политических и правовых учений: Учебник для вузов / Под общ. ред. акад. РАН, д.ф.н. проф. **В. С. Нерсисянца.** – 4-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2004. с. 27-28.

Քաղաքական պատմության ամբողջ ընթացքում, սկսած անտիկ շրջանից, մտածողները փորձել են մեկնաբանել մարդու սուբյեկտիվ վերաբերմունքը քաղաքականության նկատմամբ: Կոնֆուցիոսը, Պլատոնը, Արիստոտելը, Նիկոլո Մաքիավելլին, Շառլ Լուի Մինտեսքյոն, Ժան Ժակ Ռուսոն, Կարլ Մարքսը, Մաքս Վեբերը և այլք տուրք են տվել մարդու վարքագծի և քաղաքական գիտակցության միջև փոխհարաբերությունների մասին պատկերացումներին՝ ինչ-որ տեղ քննարկելով քաղաքական մշակույթի հարցեր: Այսպես. Պլատոնը կարծում էր, որ մարդիկ մեկը մյուսին սովորեցնում էին լինել լավ՝ արդարացի, իմաստուն, բարեշնորհ քաղաքացիներ: «Տիրակալ» աշխատության (1513) մեջ Մաքիավելլին ներկայացնում է քաղաքական մշակույթի և քաղաքացիական առաքինության գաղափարը: Ըստ նրա՝ առաջինը քաղաքացիական առաքինությունն է, դա ընդհանուր բարօրության գործուն սերն է, որը զարգանում է ազատ պետության մեջ, իսկ ընդհանուր բարիքը իրական նպատակն է, որին ծառայում են հասարակական կյանքով ապրող բոլոր գիտակից քաղաքացիները<sup>11</sup>:

Հասարակության և քաղաքացիական մշակույթի հարցերը քննարկվում էին 18-րդ դարի ֆրանսիացի լուսավորիչների կողմից: Հասարակական դաշինքի տեսության հեղինակ Ժան Ժակ Ռուսոն նշում էր, որ ժողովրդական ժողովը իրավունք ունի սահմանափակել, փոփոխել, վերցնել այն իշխանությունը, որը վստահվել է կառավարիչներին: Որպեսզի ժողովուրդը կարողանա արտահայտել իր կամքը, անհրաժեշտ է նրան սովորեցնել, լուսավորել, նրա մտտ ձևավորել քաղաքացիական մշակույթ, առանց դրանց չի կարող լինել ըմբռնման և կամքի միասնություն:

Մաքս Վեբերը, հետազոտելով քաղաքական բարոյականության հարցը՝ որպես քաղաքականի դրսևորման (այլ մոտեցմամբ՝ քաղաքական մշակույթի – Լ. Վ. և Խ. Մ.) բաղկացուցիչ մաս, առանձնացնում է նրա երկու տիպ՝ «գաղափարի բարոյականություն» և «պատասխանատվության բարոյականություն»: Առաջինը նկատի ունի քաղաքական գաղափարի իրացման ուղղվածությունը, երկրորդը՝ ցանկացած քաղաքական քայլի ամբողջ հետևանքների խիստ հաշվառումը, և եթե գաղափարների (իդեաների) իրացումը ազդում է հասարակության վրա, ապա նրանից կարելի է հրաժարվել<sup>12</sup>: Ռուս քաղաքագետ Ի. Իլյինը նշում է, որ մարդկային կյանքի իմաստը քաղաքականությամբ զբաղվելը չէ, այլ մշակույթ ստեղծելը: Քաղաքականությունը միայն գործիք է, որը մշակույթի զարգացման համար հնարավորություն է ապահովում<sup>13</sup>:

«Քաղաքական մշակույթ» եզրույթը, որ համակարգում է նաև քաղաքականության սուբյեկտիվ չափումների հետազոտությունները, առաջին անգամ օգտագործվել է 18-րդ դարում գերմանացի մտածող Յոհան Գոտֆրիդ Հերդերի (1744–1803) կողմից<sup>14</sup>, որը «Գրոհ և փոթորիկ» գրական շարժման տեսաբանն էր, զբաղվում էր լեզվի, պատմության և մշակույթի փի-

11 Տե՛ս **Մաքիավելի Ն.**, Տիրակալ, թարգ. **Ա. Բարսեղյան**. Եր. Հեղինակային հրատարակություն. 2010:

12 Տե՛ս **Вебер М.** О буржуазной демократии в России // Социологические исследования. 1992. 13.

13 Տե՛ս **Ильин И.** Почему сокрушился в России монархический строй // Наши задачи. Историческая судьба и будущее России. Статьи. 1948–1954 гг. В 2-х тт. Т.2. М., 1992.

14 Տե՛ս **Гердер И. Г.** Идеи к философии истории человечества. М., 1977. с. 333, 368.



փաստաթղթերում, կուսակցության և խորհրդային պետության ղեկավարների աշխատություններում<sup>18</sup>: Ավելին, խորհրդային հասարակագետները նշում էին, որ քաղաքական մշակույթի շատ կարևոր ասպեկտներ առաջին անգամ մշակվել են գիտական կոմունիզմի հիմնադիրների՝ Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի կողմից: Ճիշտ է, չնայած Մարքսը և Էնգելսը իրենց աշխատանքներում չեն օգտագործել «քաղաքական մշակույթ» հասկացությունը, նշում են նրանք, սակայն ցույց են տվել դասակարգային հասարակության մեջ սոցիալական տարբեր խմբերի քաղաքական մշակույթի հակադրությունը:

Անշուշտ, Վ. Ի. Լենինն իր ելույթներից մեկում օգտագործել է «քաղաքական մշակույթ» հասկացությունը, նշելով, որ «... քաղաքական մշակույթի, քաղաքական կրթության նպատակն է՝ դաստիարակել իսկական կոմունիստներ, որոնք ընդունակ լինեն հաղթելու սուտը, նախապաշարմունքները և օգնելու աշխատավոր մասսաներին, որպեսզի նրանք հաղթեն հին կարգը և պետության շինարարության գործը վարեն առանց կապիտալիստների, առանց շահագործողների, առանց կալվածատերերի»<sup>19</sup>: Դրանով հանդերձ, ձիշտ չէ նրան վերագրել քաղաքական մշակույթի տեսության գիտական հիմնավորման խնդիրները, ինչպես ներկայացնում են նախկին Խորհրդային Միության գիտնականները<sup>20</sup>:

Փամանակակից արևմտյան քաղաքագիտությունում «քաղաքական մշակույթ» եզրույթն առաջին անգամ օգտագործել է ամերիկյան քաղաքագետ Հերման Ֆայները<sup>21</sup>: «Եվրոպական մեծ տերությունների կառավարությունները» (1956 թ.) աշխատանքում նա փորձում է հիմնավորել մշակույթային-էթնիկ գործոնների ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա: Քաղաքականության տեսաբանների գործերում հետաքրքրությունը քաղաքական մշակույթի նկատմամբ պատահականորեն չառաջացավ: 1950–1960–ական թվականներին քաղաքական մշակույթը քննարկվում և վերլուծվում էր արևմտյան տարբեր քաղաքագետների կողմից, հատկապես կապված առաջին հերթին բիհեյիվիորիզմի խնդիրների հետ, որոնք ինչ-որ տեղ դուրս էին մղում հնացած ինստիտուցիոնալ մեթոդները<sup>22</sup>:

Այնուհանդերձ, քաղաքական մշակույթի տեսական հիմնավորումն ու

18 Տե՛ս **Ерьшев А.А., Ребкало В.А.** Политическая культура личности. Киев: «Вышшая школа», 1985. с. 4. **Комаров Е.Г.**, Политическая культура молодежи. Проблемы формирования и развития. – М.: «Мысль», 1986 և այլն:

19 Տե՛ս **Լենին Վ. Ի.**, Երկերի լիակատար ժողովածու, «Հայաստան» հրատարակչություն, Եր., 1982, հ. 41, էջ 483:

20 Տե՛ս **Блинов Н., Ожегов Ю., Шереги Ф.** Политическая культура и молодежь. М.: Молодая гвардия, 1982; **Кейзеров Н.М.** Политическая культура социалистического общества. – М.: «Мысль», 1982; Политическая культура личности: проблемы формирования (**В. А. Шегирцов, В.П. Васильев, В.А. Ознобкин, Л.Н. Жилина**). – М.: «Знание», 1982; Коган Л.Н., Вишневский Ю.Р., Шапко В.Т. Политическая культура развитого социализма: проблемы и опыт. – Свердловск: Средне-Уральское кн. изд-во, 1982; Лисенков М.М. Политическая культура советского человека. – М.: «Московский рабочий», 1983; Политическая культура социализма. – Фрунзе: Изд-во «Илим», 1984; **Ерьшев А.А., Ребкало В.А.** Политическая культура личности. Киев: «Вышшая школа», 1985; **Комаров Е.Г.** Политическая культура молодежи. Проблемы формирования и развития. – М., «Мысль», 1986; **Чередниченко А.П.** Культура активного политического действия. – М.: «Мысль», 1986 և այլն:

21 **Հերման Ֆայներ** [անգլ. Herman Finer (1898–1969) – անգլո-ամերիկյան քաղաքագետ, որի հետաքրքրության շրջանակներն ավելի շատ ընդգրկում էին պետական կառավարման բնագավառը:

22 Տե՛ս Теория политики: Учебное пособие / Под ред. **Б. А. Исаева**. – СПб.: «Питер», 2008.

ամբողջական հայեցակարգը առաջին անգամ տրվեց քաղաքագետներ Գաբրիել Օլմոնդի և Սիդնեյ Վերբայի կողմից: Գաբրիել Օլմոնդը 1956 թ. հանդես եկավ «Համեմատական քաղաքական համակարգեր» հոդվածով<sup>23</sup>, որտեղ նշում է քաղաքական մշակույթի՝ որպես քաղաքական համակարգերի ուսումնասիրման կարևոր միջոցի օգտակարությունն ու անհրաժեշտությունը և փորձում է բացահայտել նրա բովանդակությունը: Խնդրի ընդհանուր քննարկման առումով քաղաքական մշակույթի տեսությունը, որն առաջարկում է քաղաքական աշխարհն ուսումնասիրել նաև այս եզրույթի միջոցով, ձևավորվել է 1960-ական թվականներին տպագրված որոշ աշխատություններում<sup>24</sup>: Դրանցում մեկնաբանվեց քաղաքական մշակույթի բովանդակությունը և սկսվեց կիրառվել որպես քաղաքական տարբերությունների ու գործընթացների ուսումնասիրման գործիք: Այդ աշխատությունները նվիրված էին հասարակական երևույթների ուսումնասիրմանը, մշակույթի և քաղաքականության ոլորտներին: Քննարկվում էին քաղաքական մասնակցության, քաղաքական գործելակերպի, քաղաքական տրամադրվածության, քաղաքական կողմնորոշման և այլ հարցեր: Կարելի է ասել, որ այդ ժամանակվանից վերը նշված և նմանատիպ երևույթները դիտվեցին «քաղաքական մշակույթ» եզրույթի շրջանակներում:

«Քաղաքացիական մշակույթ, հինգ ազգերի քաղաքական դրվածքները և ժողովրդավարությունը» (1963) գրքում Գաբրիել Օլմոնդը և Սիդնեյ Վերբան ավելի հստակեցրին իրենց մոտեցումները՝ նպատակ հետապնդելով «քաղաքական մշակույթ» եզրույթի միջոցով քաղաքական կողմնորոշումները (արժեքները), ազգային բնավորությունը, մշակութային միջավայրը, քաղաքական փորձը, գիտելիքները ներկայացնել որպես վերաբերմունք քաղաքականության և քաղաքական համակարգի նկատմամբ: Այլ մոտեցմամբ կամ այլ մեկնաբանմամբ կարելի է ասել, որ «ամերիկյան քաղաքագետները առանձնացնում էին ոչ միայն քաղաքական համակարգի ձևական կառուցվածքը, այլև քաղաքական համակարգի նկատմամբ սուբյեկտիվ կողմնորոշումը, որն իր բոլոր դրսևորումներով անվանվեց «քաղաքական մշակույթ»<sup>25</sup>: Հետագայում նրանց հայրենակիցներ Ուոլտեր Ռոզենբաումը, Ռոնալդ Ինգլիարտը, Դանիել Էլզարը, անգլիացիներ Ռիչարդ Ռոուզը, Դենիս Կավանախը, գերմանացի տեսաբան Կլաուս ֆոն Բեյմեն, ֆրանսիացիներ Մորիս Դյուվերժեն, Ռոժե-ժերար Շվարցենբերգը և այլ քաղաքագետներ էականորեն լրացրին քաղաքական մշակույթի ուսմունքը՝ այն վերածելով քաղաքական միջավայրում մարդու գոյատևման հետազոտման համապարփակ տեսական միջոցի<sup>26</sup>: Չնայած այն հանգամանքին, որ քաղաքական մշակույթը կապված է արժեքային կողմնորոշումների, հավատալիքների, իդեալների և համոզմունքների առկայության հետ, որը հատուկ է **ազգային բնավորությանը** և **կոնկրետ հասարակության** քա-

23 Տե՛ս **Almond G.** Comparative Political System. – "Journal of Politics" 18 (August), 1956.

24 Տե՛ս **Almond G.**, Verba S. The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton Univ. Press, 1963; **Pye L.W.**, and **Verba S.** (eds.), Political Culture and Political Development. Princeton Univ. Press, 1965.

25 **Վարդանյան Լ.**, Քաղաքական մշակույթ: Քաղաքագիտություն: Ուսումնական ձեռնարկ, Երևանի պետ. համալս., – Եր., Երևանի համալս. հրատ., 2006, էջ 447:

26 Տե՛ս **David D.** Laitin and Aaron Wildavsky. Political culture and political preferences. The American Political Science Review. Vol. 82, No. 2 (Jun, 1988), pp. 589-597. «American Political Science Association».



ղաքական կյանքում մարդու ընդգրկվածությանը, այս եզրույթը դարձել է քաղաքականության սուբյեկտիվ համատեքստի ընդհանրացված բնութագրման խորհրդանիշ:

Պետք է նշել, որ քաղաքական մշակույթի տեսության ստեղծման համար հիմք են հանդիսացել եվրոպական և գաղութային երկրների սոցիալական խմբերի հոգեբանական կազմակերպման տարբեր ձևերի վերաբերյալ հետազոտությունները, որոնք տարածված էին հետպատերազմյան շրջանում: Այդ կոլեկտիվ նախապաշարմունքները, կարծրատիպերը, պատմական փորձը և մարդկային կենսագործունեության այլ հոգեբանական գործոնները, որոնք ազդում էին իշխանության և հասարակության փոխազդեցության նորմերի և առանձնահատկությունների վրա, նկարագրվում էին ազգային բնավորության, ազգային ոգու, ազգային հոգեբանության, ազգային արժեքների տարբեր եզրույթներում: Այս ամենից զատ քաղաքագետներին հետաքրքրում էր նաև այն հանգամանքը, թե ինչու մի շարք երկրներում մշակված քաղաքական վերափոխումների մոդելները հնարավոր չէ արդյունավետ կիրառել այլ երկրներում: Ահա այս ամենը հիմք հանդիսացավ, որ քաղաքագետները սկսեն ուշադրություն դարձնել քաղաքականության և մշակույթի փոխհարաբերությանը՝ որպես քաղաքական փոփոխությունները և քաղաքական հարաբերությունները որակապես բնութագրող մշակութաբանական մեկնաբանություն: Բացատրելով «քաղաքական մշակույթ» եզրույթի հանրաձանաչության պատճառները՝ 20-րդ դարի 60-ական թվականներին Գ. Օլմոնդը նշում էր աշխարհում քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացման վերաբերյալ կառավարությունների ներկայացրած գաղափարների ձախողումը, ինչն առաջ է քաշում մի շարք հիմնախնդիրներ: Դրա պատասխանը եղավ քաղաքական մշակույթի հետազոտումը և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 19-րդ և 20-րդ դարերի սոցիալական տեսության ու սոցիալական գիտությունների (ամենից առաջ էմպիրիկ գիտակարգերի) մեթոդաբանության զարգացումը, որոնք հնարավորություն ընձեռեցին այդ հիմնախնդիրների լուծման համար<sup>27</sup>: Այս առումով Գ. Օլմոնդը առանձնացնում էր եվրոպական քաղաքական սոցիոլոգիայի և, ամենից առաջ, Մաքս Վեբերի ազդեցությունը: Նա կարևորում էր նաև պսիխոանալիտիկոլոգիայի ազդեցությունը, որը ծագել էր Զիգմունդ Ֆրեյդի հոգեվերլուծությունը անտրոպոլոգիայի և սոցիալական գիտությունների հետ միաձուլման արդյունքում: Սկսած 1920-ականներին և 30-ականների սկզբներին լույս տեսած աշխատություններից (Բ. Մալինովսկի, Մ. Միդ, Հ. Լասվել), քաղաքական մշակույթի մասին հետազոտություններում հաստատվում է հոգեմշակութաբանական ուղղությունը, որի ներկայացուցիչները հիմնական թիրախ էին ընտրել երեխաների սոցիալականացումը, անգիտակցականի դրդապատճառները և հոգեբանական մեխանիզմները: Սոցիալական հոգեբանների հիմնական ներդրումը քաղաքական մշակույթի հետազոտություններում հանդես է գալիս քաղաքական դրվածքների, կողմնորոշումների

27 Հղումը տրվում է ըստ **Смирнов В.В.** «Круглый стол» по проблемам политической культуры // Политические отношения: прогнозирование и планирование: Ежегодник Советской ассоциации политических наук, 1977. М., 1979. с. 126.

ձևավորման, փոփոխման և կառուցվածքի մասին ուսումնասիրություններում: Տարբեր մեթոդների օգտագործումը, չափումների տեխնիկայի կատարելագործումը, դրանց տեղափոխումը քաղաքագիտության և սոցիոլոգիայի բնագավառ, քաղաքական մշակույթի հետազոտություններին գիտական բնույթ հաղորդեց<sup>28</sup>:

Քաղաքագետները նման սոցիալ-հոգեբանական հետազոտությունները ընկալում են որպես քաղաքական գործունեության սուբյեկտիվ կողմերի առավել ընդհանրացված մոդելների նկատմամբ որոշակի պահանջմունք: Գաբրիել Օլմոնդը, նկարագրելով քաղաքական համակարգը, առանձնացրել է երկու մակարդակ՝ ինստիտուցիոնալ (որ ավանդաբար սահմանում են ինստիտուտները և նրանց գործառույթները, նորմերը, պետության գործողության մեխանիզմները) և կողմնորոշման (որն արտահայտում է տարբեր քաղաքական օբյեկտների նկատմամբ մարդկանց վերաբերմունքի յուրահատուկ ձևերը): Վերջինիս միջոցով էլ բնութագրվում է քաղաքական երևույթների մի ամբողջ յուրահատուկ դաս՝ որպես քաղաքական մշակույթ: Գ. Օլմոնդը նշում է քաղաքական մշակույթի երկու կարևոր պահ: Առաջին, որ չի համընկնում տվյալ քաղաքական համակարգի կամ հասարակության հետ: Քաղաքականությանը վերաբերող կողմնորոշումների համակարգը կարող է տարածվել, դուրս գալ քաղաքական համակարգի սահմաններից: Երկրորդ՝ քաղաքական մշակույթն այն նույն բանը է, ինչ ընդհանուր մշակույթն է<sup>29</sup>:

## 2. Քաղաքական մշակույթի մեկնաբանությունները

Քաղաքական մշակույթն իր պատմական, աշխարհաքաղաքական, էթնիկ և կրոնական դրսևորումների բազմաքանակության պատճառով խիստ բազմազան է: Այս քաղաքակրթական ֆենոմենի նկատմամբ կիրառելի է ամերիկացի փիլիսոփա Ուիլյամ Ջեյմսի «ծաղկող խառնաշփոթություն» բնութագրությունը: Հետևաբար, քիչ է հավանականությունը, որ կարելի է տալ կամ ձևակերպել քաղաքական մշակույթի դիպուկ և «վերջնական» բնութագրումը: Միաժամանակ, կարծում ենք՝ այս եզրույթի ըմբռնման համար անհրաժեշտ է ղեկավարվել մի քանի կոնցեպտուալ մոտեցումներով: Այսպես. լեռ քաղաքագետ Կ. Օպալեկի կարծիքով քաղաքական մշակույթի կոնցեպցիան քաղաքականության տեսական և էմպիրիկ հետազոտությունների իրական գործիք է: Սակայն քաղաքական մշակույթի կոնցեպտը<sup>30</sup>

28 Տե՛ս նույն տեղում, էջ 126-127:

29 Տե՛ս **Almond G.** Comparative Political System. – “Journal of Politics” 18 (August), 1956, **Almond G., Verba S.** The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, univ. press, 1963.

30 Կոնցեպտ լատ. conceptus – միտք, եզրույթ: Եզրույթի իմաստային բովանդակություն, որի ծավալը այդ եզրույթի առարկան է, ի տարբերություն նրա արտահայտման կոնկրետ լեզվական ձևի: Կոնցեպտը եզրույթից տարբերվում է նրանով, որ ոչ միայն իմաստային առումով մտքում պատկերացվում է, այլև զգացվում է՝ դառնալով հույզերի և ապրումների, համակրանքի և հակակրանքի, նկարագրի և զուգորդման (առցացման) առարկա: Ունի հաղորդակցային բնույթ, այսինքն՝ դրսևորվում է երկխոսություններում և շփումներում: Ընկալվում է նաև որպես. 1. Ձևակերպում, մտավոր պատկեր, ընդհանուր միտք, ընդհանուր եզրույթ (կոնցեպտուալիզմ), ըմբռնում, պատկերացում, հասարակագիտական գրականության մեջ թարգմանվում է նաև որպես հղացք: 2. Ինչ-որ բանի վերաբերյալ հայացքների համակարգ:

որպես այդպիսին, բավարար չափով պարզ չէ, և նրա ապարատը դեռևս հեռու է կատարյալ լինելուց: Այս առումով Կ. Օպալեկը քաղաքական մշակույթի կոնցեպցիայում ներկայացնում է առանցքային գիտաբանների (տերմինների) բազմանշանակությունը՝ դրվածք, կողմնորոշում, կերպար, քաղաքականություն, քաղաքական համակարգ և այլն: Ըստ նրա՝ բազմազան են նաև քաղաքական մշակույթի սահմանումները, որոնք կարելի է բաժանել չորս հիմնական խմբի:

**Օբյեկտիվիստական**, որտեղ մշակույթ նշանակում է հաստատված օրինակներ (իշխանական կարգ), որոնք որոշում են քաղաքական համակարգի սահմաններում գործող անձանց վարքագծի ոլորտը, և որոնցից շեղումը կարող է հանգեցնել իշխանության կողմից պատժամիջոցների կիրառման: Դրանք կապված են կառուցվածքային-գործառնական մոտեցումով, որի շրջանակում արժեքները դիտարկվում են որպես հասարակության, նրա տարբեր խմբերի միջև համաձայնություն ապահովող բարձրագույն օբյեկտիվ սկզբունքներ (եղանակներ, միօրինակություններ): Օրինակ, ամերիկյան քաղաքագետ Դեվիդ Իստոնի համար քաղաքական մշակույթը քաղաքական վարքագիծը սահմանող պատկերացումների և համոզմունքների ամբողջությունն է: Այլ մոտեցմամբ (Դ. Պոլ, Լ. Պայ)՝ քաղաքական մշակույթը քաղաքական համակարգի ընդունած քաղաքական վարքագծի նորմերի և օրինակների ամբողջությունն է:

**Էվրիստիկական**<sup>31</sup>, որտեղ մշակույթը համարվում է վարկածային (հիպոթետիկ) կառույց և օգտագործվում է վերլուծական նպատակների համար: Այս սահմանումը հանգեցնում է քաղաքական կողմնորոշումների ենթադրվող ձևերի ամբողջության, որոնք իրենց ինքնահաստատմամբ նպաստում են քաղաքական համակարգի կայունությանը կամ ճիշտ գործառնությանը: Մեկ այլ մոտեցմամբ (Ս. Հանթինգտոն)՝ քաղաքական մշակույթը ըմբռնվում է որպես ցանկալի վարքագծի հիպոթետիկ նորմատիվային մոդել:

**Համընդգրկուն, բազմակողմանի** (comprehensive), որտեղ մշակույթը ընդգրկում է և՛ կողմնորոշումները, և՛ վարքագիծը: Քաղաքական մշակույթին վերագրվում է այն ամենը, ինչ տեղի է ունենում քաղաքականությունում: Այն կան նույնականացվում է քաղաքական համակարգի հետ (Դ. Մերվիկ), կան հանգեցվում է քաղաքական հարաբերությունների (Ռ. Թակեր, Լ. Դիտմեր), և, ի վերջո, չունի իր առանձնահատուկ բովանդակությունը:

**Հոգեբանական կամ սուբյեկտիվիստական**, որտեղ քաղաքական մշակույթը դիտարկվում է որպես քաղաքական օբյեկտների նկատմամբ կողմնորոշումների ամբողջություն: Պետք է նշել, որ Կ. Օպալեկը առավելությունը տալիս է Գ. Օլմոնդի և նրա խմբի կողմից մշակված սուբյեկտիվիստական մեկնաբանմանը<sup>32</sup>: Այստեղ քաղաքական մշակույթը սահման-

31 Էվրիստիկա (հուն. heurisko – գտնում եմ, հայտնաբերում եմ) – գիտելիքների բնագավառ, որն ուսումնասիրում է ստեղծագործական գործունեությունը՝ այն ըմբռնելով իբրև խնդիրների լուծում, հուշող հարցերով բացատրելու մեթոդ:

32 Հղումը կատարվում է ըստ **Смирнов В.В.** «Круглый стол» по проблемам политической культуры // Политические отношения: прогнозирование и планирование: Ежегодник Советской ассоциации политических наук, 1977. М., 1979. с. 128.

վում է որպես քաղաքականություն ռելեվանտային (ինչ-որ տվյալ ժամանակին վերաբերող) կողմնորոշումների համակարգ, որպես քաղաքականության սուբյեկտիվ ոլորտ, քաղաքական համակարգի հոգեբանական ցուցանիշ, որը որոշում է քաղաքական գործողությունը և նրան իմաստ է տալիս (Ջ. Պաուել): Օրինակ, Գ. Օլմոնդը և Ս. Վերբան գրում են, որ խոսելով քաղաքական մշակույթի մասին՝ մենք նկատի ունենք քաղաքական համակարգը, որը ինտերիորիզացվում է (մարդկային հոգեկանի ներքին կառուցվածքների ձևավորում, ներքնապես յուրացում) բնակչության գիտելիքներում, զգացմունքներում և գնահատումներում<sup>33</sup>: Կարծում ենք՝ անհրաժեշտ է նշել, որ հաճախ քաղաքական մշակույթը նկարագրվում և էմպիրիկ հետազոտվում է այնպիսի եզրույթների օգնությամբ, ինչպիսիք են կողմնորոշումները, համոզմունքները, արտահայտիչ (էքսպրեսիվ) խորհրդանիշերը, կառուցակարգված որոշակի տիպերն ու ձևերը, քաղաքական համակարգերը կամ էլ նրանց տարրերը և այլն:

Առհասարակ, քաղաքական մշակույթի մեկնաբանման համար տարածված է երկու մոտեցում՝ լայն և նեղ: Լայն մոտեցմամբ, որոշ տեսաբաններ քաղաքական մշակույթը գնահատում են որպես «նոր տերմին հին գաղափարի համար» (Դենիս Կավանախ). քաղաքական մշակույթն ընկալվում է որպես հասարակության ընդհանուր մշակույթի բաղադրամաս՝ կապված քաղաքականության հետ: Իսկ այն հայեցակարգերը, որոնք քաղաքական մշակույթը նույնացնում են քաղաքական համակարգի հետ (օրինակ, Ջ. Նյումեն), թվում է, թե բացառում են այդ հասկացության կիրառման անհրաժեշտությունը: Նեղ մեկնաբանություն է համարվում նաև քաղաքական մշակույթը մարդկանց քաղաքական կողմնորոշումներին և վարքագծին հանգեցնելը:

Ի հակադրություն այդ գաղափարների՝ զարգանում են նաև այնպիսի մոտեցումներ, որոնց համաձայն՝ քաղաքական մշակույթը քաղաքականության բովանդակության յուրահատուկ սուբյեկտիվ կողմ է դառնում, որը չի նույնանում տարբեր սուբյեկտիվ իրավիճակների՝ գաղափարախոսության, զանգվածային տրամադրությունների, ազգի հոգեբանական դրվածքի և այլնի հետ: Հատկանշական է, որ Գաբրիել Օլմոնդը քաղաքական մշակույթը տեսություն չի համարում, այլ դիտում է որպես փոփոխականների ամբողջություն, որը հեշտացնում է քաղաքագիտության ուղղությունների հետազոտման աշխատանքը, քանի որ քաղաքականության հոգեբանական և սուբյեկտիվ չափումները ծառայում են որպես մեկնողական (բացատրողական) գործոններ: Քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես մեկնաբանող, բացատրող գործոն, բաց է ստուգումների համար<sup>34</sup>:

Ներկայումս քաղաքական գիտության մեջ ձևավորվել է քաղաքական մշակույթի մեկնաբանման երեք հիմնական ուղղություն: Գիտնականների մի խումբ, զարգացնելով Գաբրիել Օլմոնդի գաղափարները և փորձելով հասնել առարկայի ընդգրկուն ըմբռնման, քաղաքական մշակույթը նույն-

33 Տե՛ս Almond G., Verba S. The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton Univ. Press, 1963, p. 14.

34 Տե՛ս Almond G., Verba S. The Civil Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. «Princeton University Press». 1963.

նացնում են քաղաքական աշխարհի մեջ հոգևոր երևույթների ամբողջության հետ (Ս. Վերբա և այլք): Այս իմաստով այն ոչ միայն ամբողջությամբ ընդգրկում է քաղաքականության սուբյեկտիվ բովանդակությունը, այլև մեկնաբանվում է որպես չափազանց իդեալական կազմավորում: Այս առումով՝ քաղաքական մշակույթը վերածվում է հասարակական գիտակցության ձևի կամ հոգեկան դրվածքի, որը գուրկ է վարքաբանական ասպեկտներից: Ռուս հետազոտողներից նման տեսակետ են զարգացնում խորհրդային և ռուսական քաղաքագետներ Ֆեդոր Բուրլացկին, Ալեքսանդր Գալկինը և այլք, որոնք քաղաքական մշակույթը սահմանափակում են քաղաքական գիտակցության ոլորտով՝ չներառելով քաղաքական վարքագծի դրսևորումները<sup>35</sup>:

Ներկայացված և դրանց հարող մոտեցումները հիմնված են, ինչպես մենք ենք պատկերացնում, քաղաքական մշակույթի և քաղաքական հոգեբանության նույնականացման վրա, որը, մեր կարծիքով, անթույլատրելի է: Հենց այս հասկացությունների տարբերակման հիման վրա ձևավորված հայեցակարգը կարող է բացահայտել քաղաքական մշակույթի էությունը:

Անկասկած, ուշադրության են արժանի այն ձգտումները, որ փորձում են տալ քաղաքական մշակույթի ծավալուն բնութագիրը՝ նրանում ընդգրկելով ոչ միայն քաղաքական գիտակցության բաղադրամասերը, այլև քաղաքական իրողությունները, որ գործառնում են տվյալ հասարակության մեջ քաղաքական ինստիտուտների, կազմակերպությունների տեսքով: Սակայն դժվար է համաձայնել քաղաքական մշակույթի ընդլայնված մեկնաբանման հետ՝ որպես հասարակության առանձին սոցիալական խմբերի ու դասերի սոցիալական փորձի մարմնացում: Ըստ էության, ավելի ճիշտ կլինի քաղաքական մշակույթը դիտարկել որպես հասարակության, սոցիալական խմբերի և շերտերի քաղաքական (միաժամանակ տնտեսական, սոցիալական, բարոյական) զարգացման արդյունք:

Հետազոտողների երկրորդ խումբը քաղաքական մշակույթի մեջ ներառում է նորմատիվ պահանջներ (անգլիացի քաղաքագետ Ստիվեն Ուայթ (Stephen White)) կամ քաղաքականության ոլորտում մարդու վարքի տիպիկ օրինակներ: Այսպես. ամերիկյան քաղաքագետ, Ֆլորիդայի համալսարանի պրոֆեսոր Պոլ Դ'Անիերին քաղաքական մշակույթը սահմանում է որպես արժեքների կոնֆիգուրացիա<sup>36</sup>, որն ընկած է քաղաքականության հիմքում: Մեկ այլ ամերիկյան քաղաքագետ՝ Ուոլտեր Ռոզենբաումը, քաղաքական մշակույթը ներկայացնում է որպես զգացմունքների, գաղափարների և վարքի կոնցեպտուալ դրսևորում: Նման մոտեցում ուներ նաև ամերիկայի քաղաքագետ Ռոբերտ Չառլզ Թաքերը (1918–2010): Քաղաքական մշակույթին վերաբերվող մի շարք հետաքրքիր դրույթներ է զարգացնում լեհ քաղաքագետ Եժի Վյատրը իր «Քաղաքական հարաբերությունների սոցիոլոգիա» աշխատության մեջ: Նա գրում է, որ քաղաքական մշակույթը դիրքորոշումների, արժեքների և վարքագծի օրինակների ամ-

35 Տե՛ս **Бурлацкий Ф.М.** Ленин. Государство. Политика. – М.: «Наука», 1970. с. 55. **Бурлацкий Ф., Галкин А.** Социология. Политика. Международные отношения. – М.: «Международные отношения», 1974. с. 110.

36 Կոնֆիգուրացիա – 1. Ուրվանկար, ընդհանուր տեսք, ուրվագիծ: 2. Փոխաբանականություն, փոխտեղադրվածություն:

բողջություն է, որը շոշափում է իշխանության և քաղաքացիների փոխհարաբերությունները: Ըստ նրա՝ քաղաքական մշակույթին վերագրվում է.

ա) քաղաքականության վերաբերյալ գիտելիքները, ծանոթությունը փաստերի հետ, հետաքրքրությունը դրանց նկատմամբ,

բ) քաղաքական երևույթների գնահատումը, գնահատողական կարծիքները, թե ինչպես պետք է իրականացվի իշխանությունը,

գ) քաղաքական դիրքորոշումների հուզական կողմերը, օրինակ, սերը հայրենիքի նկատմամբ, թշնամու նկատմամբ ատելությունը և այլն,

դ) տվյալ հասարակությունում ընդունված քաղաքական վարքագծի օրինակները, որոնք ինչ-որ առումով որոշում են, թե ինչպես պետք է գործել քաղաքական կյանքում<sup>37</sup>:

Ռուս հետազոտողներ Ե.Ա. Եգորովը, Ն.Մ. Կեյզերովը, Մ.Խ. Ֆարկուշինը, Է. Բատալովը և այլոք նույնպես քաղաքական վարքագծի դրսևորումները ներառում են քաղաքական մշակույթի մեջ: Է. Բատալովի կարծիքով՝ քաղաքական մշակույթը պատմականորեն ձևավորված կայուն համոզմունքների, պատկերացումների, վարքագծի մոդելների համակարգ է, որը դրսևորվում է քաղաքական սուբյեկտների գործունեության մեջ և ապահովում հասարակության քաղաքական կյանքի վերարտադրությունը՝ ժառանգականության հիման վրա: Այս մոտեցմամբ՝ քաղաքական-մշակութային երևույթները հանդես են գալիս որպես մարդու վարքագծի հիմք, որը կողմնորոշում է նրան դեպի տվյալ հասարակության առավել տարածված նորմերը և քաղաքական խաղի կանոնները, այսինքն՝ զանգվածային գործողություններ կառավարելու միջոցով կարգավորելու քաղաքական գործընթացները:

Երրորդ ուղղության շրջանակներում քաղաքական մշակույթը մեկնաբանվում է որպես մարդու քաղաքական գործունեության միջոց, որ ենթադրում է վերջինիս համոզմունքների, իդեալների, սկզբունքների իրագործում (Իեն Շապիրո, Պարմատմա Շարան, Ուոլտեր Ռոզենբաում): Քաղաքական մշակույթի ընկալումը՝ որպես վարքաբանական արժեքների համակարգ, բացահայտում է այդ մշակույթը որպես «կայուն ձևերի» ամբողջություն, մարդկանց քաղաքական գործունեության «հոգեկան կողբասներ», որոնք վկայում են պետական կյանքի համընդհանուր նորմերի և ավանդույթների յուրացման կարողության աստիճանի, տվյալ հասարակության համար առօրյա կյանքում իրենց իրավունքները և պարտականությունները կատարելու թե՛ ստեղծագործական, թե՛ ստանդարտ մոտեցումների մասին և այլն: Ուրեմն՝ «քաղաքական մշակույթ» հասկացությունը չի կարելի հանգեցնել բացառապես հոգեկան իրավիճակների: Նրանում ներառվում է նաև վարքի որոշակի օրինակներ: Դա համապատասխանում է մշակույթի համընդհանուր ըմբռնմանը, ինչպես նաև այն հետազոտական կռահմանը, որ հարկադրում է փնտրել վարքի կայուն օրինակներ, մշակույթի կարևորագույն բնութագրիչներ և պատճառ է դառնում հասարակական ու քաղաքական գործողությունների համար:

37 Տե՛ս **Вятр Е.** Социология политических отношений. – М.: «Прогресс», 1979. с. 259-260.

### 3. Քաղաքական մշակույթը՝ որպես մշակույթի և քաղաքականության բաղկացուցիչ մաս

Քաղաքական մշակույթի սահմանման և մեկնաբանման բազմազանության պատճառներից մեկը, կարծում ենք, կապված է ինչպես մշակույթի, այնպես էլ քաղաքականության բազմիմաստության, այդ եզրույթների տարաբնույթ մեկնաբանությունների, փոխհարաբերությունների, փոխըմբռնումների հետ: Եվ ինչպես նշում է ռուս ճանաչված մշակութաբան Լեոնիդ Իոնինը, մշակույթն այն բարդ եզրույթներից է, որ կիրառվում է առօրյա և գիտական պրակտիկայում: Եվ դա բացատրվում է նախ և առաջ նրանով, որ նա ունի լեզվի բարդ պատմություն, և ապա նաև այն հանգամանքով, որ կիրառվում է տարբեր գիտակարգերում՝ բարդ եզրույթներն ու մտքի համակարգերը նշելու համար<sup>38</sup>: Առհասարակ, հասարակական կեցությունը բնութագրող հիմնական մեծությունները առնչվում են մշակույթի հիմքային բնութագրումների հետ: Գիտական գրականության մեջ առաջարկվում են մշակույթի սահմանման տարբեր մոտեցումներ: Մշակույթը մարդկության ստեղծագործական գործունեությունն է՝ կեցության և գիտակցության բոլոր ոլորտներում հանդիսանալով արժեքների, նորմերի, նշանային համակարգերի ստեղծման գործընթացի դիալեկտիկական միասնություն և մշակույթային ժառանգության յուրացում, որն ուղղված է իրականության և հասարակության վերափոխմանը<sup>39</sup>:

Ռուս փիլիսոփա Վ. Ս. Ստեպինի մոտեցմամբ, մշակույթը մարդկային կենսագործունեության (գործունեության, վարքի և հաղորդակցման) վերկենսաբանական ծրագրերի պատմականորեն զարգացող համակարգ է, որն ապահովում է սոցիալական կյանքի վերարտադրությունը և փոփոխումը նրա բոլոր հիմնական դրսևորումներում<sup>40</sup>: Մշակութաբանական գրականությունում առաջարկվում են մշակույթի սահմանման տարբեր մոտեցումներ՝ հոգևոր և նյութական արժեքների ամբողջություն, մարդկային գործունեության ցանկացած արդյունք, ստեղծագործական գործունեություն<sup>41</sup> և այլն: Քննարկման իմաստով կարևորվում է հետևյալ հարցը. արդյո՞ք մշակույթն ընդհանրապես և քաղաքական մշակույթը՝ մասնավորապես, ներառում են մարդկային գործունեության բոլոր արդյունքները՝ առանց դրանք տարբերակելու: Մասնավորապես կարելի է մշակույթային իրողություններ համարել հեղափոխությունները, պատերազմները, նաև մարդկային գործունեության արդյունքները, ինչպես զենքը, ռազմամթերքը, ռազմական տեխնիկան և այլն, որոնք, վերջին հաշվով, ուղղված են մարդկային կյանքը ոչնչացնելուն: Սակայն այդ դեպքում մենք չենք կարող ժխտել, որ պատերազմն ու միջուկային զենքը նույնպիսի մշակույթային իրողություններ են, ինչպես և խաղաղությունն ու տիեզերանավերը:

38 Стн Ионин Л. Г. Социология культуры. Четвертое издание, переработанное и дополненное. – М.: 2004. с. 13.

39 Стн Ирхин Ю. В. Социология культуры: учебник / Ю. В. Ирхин. – М.: «Экзамен», 2006. с. 13.

40 Стн Культура // Новая философская энциклопедия: в 4т. Т.2 / Под ред. В. С. Степина. – М.: «Мысль», 2001. с. 341.

41 Стн Культурология. Под ред. Г. Драча. Ростов на Дону. 1999. с. 15. Веремеев А. А. Введение в культурологию. Брянск, 2000. с. 33.

Իրականացնելով մշակույթի համակարգային բազմակողմանի հետազոտություն՝ հայ փիլիսոփա և մշակութաբան Էդուարդ Մարգարյանը ներկայացրել է մշակույթի և մարդկային գործունեության հարաբերակցության խնդիրը: Մշակույթի էությունը պարզելու համար, նախ, նա բացահայտում է «գործունեություն» հասկացության բովանդակությունը: Ամենալայն իմաստով գործունեությունը նա բնորոշում է որպես կենդանի համակարգերի տեղեկատվական ուղղվածություն ունեցող ակտիվություն, որը ծագում է շրջապատի նկատմամբ նրանց հարաբերություններից՝ ինքնապահպանման նպատակով<sup>42</sup>: Ընդ որում, նա նշում է կենդանի համակարգերի ակտիվության յուրահատկությունը, որը կապված է արտաքին միջավայրի ներգործությունը կարգավորված արտացոլելու կարողության և դրա հիման վրա տեղեկատվական առանձնահատուկ ծրագրեր մշակելու հետ: Է. Մարգարյանը մարդկային գործունեությունը դիտում է որպես մարդկանց սոցիալական ակտիվություն, որը ծրագրավորվում և իրագործվում է մշակույթի մեխանիզմներով<sup>43</sup>: Մարդկային գործունեության, ինչպես և այլ կենդանի համակարգերի գլխավոր գործառույթը նա համարում է հարմարումը և հակափոխանակումը (հակաէնթրոպիան)<sup>44</sup>, որոնց շնորհիվ՝ կենդանի համակարգերը պահպանում և համապատասխան պայմանների դեպքում կատարելագործում են իրենց կազմակերպման տիպը:

Մարդկային գործունեության այս ըմբռնումից ելնելով՝ Էդուարդ Մարգարյանը մշակույթը դիտում է որպես արտակենսաբանորեն ստեղծված այնպիսի միջոցների և մեխանիզմների համակարգ, որոնց շնորհիվ մոտիվացվում, ուղղություն է ստանում, կոորդինացվում, իրագործվում և ապահովվում է մարդկային գործունեությունը: Այսինքն՝ մշակույթը կարող է ներկայացվել և ուսումնասիրվել որպես մարդկային գործունեության առանձնահատուկ եղանակ, որպես այնպիսի միջոցների և մեխանիզմների համակարգ, որոնց շնորհիվ իրագործվում և ապահովվում է մարդկային գործունեությունը<sup>45</sup>: Տեսական այս մոտեցման դեպքում մշակութային իրողություն կարող են համարվել և՛ նյութական արտադրության գործիքները, և՛ զանազան բարոյական մղումները, նպատակները, գաղափարները, և՛ արժեքներն ու տարբեր սոցիալական ու իրավական նորմերը: Մշակույթը սոսկ մարդկային գործունեությունը խթանող, ծրագրավորող, իրագործող և ապահովող երևույթ է, այսինքն՝ այն ընդհանուր եղանակը, որի շնորհիվ ուղղորդվում և իրագործվում է մարդկային գործունեությունը<sup>46</sup>:

Անդրադառնալով մարդկային գործունեության արդյունքներին՝ Է. Մարգարյանը հիմնավորում է, որ դրանք ընդգրկվում են «մարդկային գործունեության եղանակ» հասկացության մեջ: Այս կապակցությամբ նա նշում է հետևյալը. մարդկանց գործունեության ընթացքը քննարկելիս՝ մշակույթի առարկայացված տարրը այս կամ այն կերպ կոչված է ծառայելու նրա այժմեականացման խթանման, ծրագրավորման, իրագործման, ֆիզիկական

42 Տե՛ս **Маркарян** Ծ. Ս. О генезисе человеческой деятельности и культуры. Ереван, 1973. с. 13.

43 Տե՛ս նույն տեղում, էջ 14.

44 Էնթրոպիա (հին հուն.՝ *έντροπία* շրջադարձ, փոխակերպում), բազմաթիվ էլեմենտներից բաղկացած համակարգի անկարգավորվածության չափը բնական գիտություններում:

45 Տե՛ս **Маркарян** Ծ. Ս. О генезисе человеческой деятельности и культуры. Ереван, 1973. с. 14.

46 Տե՛ս նույն տեղում, էջ 56:



կենսաապահովման, դրանով իսկ ընդգրկվում է «գործունեության եղանակ» հասկացության մեջ»<sup>47</sup>: Է. Մարգարյանն առաջ է քաշում մեկ ուշագրավ դրույթ ևս. մարդկային գործունեության ոչ բոլոր արդյունքները կարող են մեկնաբանվել որպես մշակույթ: Նկատի ունենալով դա՝ նա առաջարկում է և գիտական շրջանառության մեջ է դնում «մարդկային գործունեության կողմնակի արդյունք» հասկացությունը<sup>48</sup>:

Մարգարյանի կողմից առաջ քաշված հայեցակարգում կան նաև այլ հետաքրքրական դրույթներ, մասնավորապես հասարակական կյանքի ուսումնասիրության նրա մեթոդաբանական մոտեցումները, մշակույթի, որպես ամբողջական համակարգի ենթահամակարգերի և գործառնությունների բացահայտումը և այլն: Մեր կարծիքով՝ մշակույթի այս ընթացումն էլ որպես մարդկային գործունեության առանձնահատուկ եղանակ, որպես այնպիսի միջոցների և մեխանիզմների համակարգ, որոնց շնորհիվ իրագործվում և ապահովվում է մարդկային գործունեությունը, ընկած է քաղաքական մշակույթի էության հիմքում: Հենց նման մոտեցումները պետք է հաշվի առնվեն «քաղաքական մշակույթ» հասկացության մեկնաբանման ժամանակ:

Կարևորություն է ներկայացնում նաև ընդհանուր մշակույթի կազմում քաղաքական մշակույթի զբաղեցրած **տեղի** հիմնահարցը: Այստեղ բանավեճի առարկա է դառնում այն հարցը, թե արդյոք այն պետք է ներառել հոգևոր մշակույթի կազմում կամ համարել մշակույթի առանձին տեսակ: Խորհրդային Միության տարիներին, հատկապես 1970–1980–ական թվականներին, որոշ հետազոտողներ քաղաքական մշակույթը դատում էին հոգևոր մշակույթի ոլորտին: Այսինքն՝ քաղաքական մշակույթը դիտարկվում էր որպես հոգևոր գործունեության առանձնահատուկ տեսակ, որը ներառում է գաղափարական և քաղաքական գիտելիքներ, հայացքներ և համոզումներ, նաև հասարակության և անհատի գաղափարական արժեքներ<sup>49</sup>: Մասնագիտական գրականության մեջ կան նաև այլ կարծիքներ, ըստ որոնց քաղաքական մշակույթը մշակույթի առանձին տեսակ է, որը չի նույնացվում ոչ հոգևոր, ոչ նյութական մշակույթին: Այսպիսի հիմնավորմամբ են հանդես եկել ռուս հետազոտողներ Մ. Տ. Իովչուկը և Լ. Ն. Կոզանը: Նրանք նշում են, որ մարդու սոցիալական գործունեությունը կարող է լինել նյութական, քաղաքական և հոգևոր: Գործունեության այս երեք ձևերին համապատասխան՝ առանձնացվեց մշակույթի երեք հիմնական տեսակ՝ նյութական, քաղաքական, հոգևոր<sup>50</sup>:

**Քաղաքական մշակույթը գտնվում է քաղաքականության և մշակույթի հանգուցակետում. յուրահատուկ սահմանային շերտ է, մարդկային գործունեության արդյունքների ամբողջություն, որոնք արտացոլում են քաղաքական ոլորտը: Քաղաքական մշակույթն այդ արդյունքների յուրացումն է:** Այսինքն, քաղաքական մշակույթը դիտվում է որպես հասարակական–քաղաքական գործունեության մեջ մարդու գիտե-

47 Տե՛ս **Маркарян Э. С.** Теория культуры и современная наука. М., 1983. с. 115.

48 Տե՛ս նույն տեղում:

49 Տե՛ս **Духовный мир развитого социалистического общества.** – М.: «Наука», 1977. с. 44. **Духовная культура социалистического общества** – М.: «Прогресс», 1979. с. 28.

50 Տե՛ս **Иовчук М.Т., Коган Л.Н.** Советская социалистическая культура: исторический опыт и современные проблемы. – М.: Политиздат, 1979. с. 30–31.

լիքների, համոզմունքների իրացման գործընթաց, եղանակ և ձև, քաղաքական հարաբերությունների յուրացում, ընդունակությունների զարգացում, քաղաքականության ոլորտում սերնդից սերունդ փոխանցվող գործունեության միջոցներ<sup>51</sup>: Հայտնի է, որ չնայած մեր ժողովրդի կրած գրկանքներին, նախկինում պետականության կորստին՝ վտանգի պայմաններում մենք տեսնում ենք մեր ժողովրդի համախմբման ավանդույթը որպես ազգի պահպանման կարևորագույն գործոն (Վարդանանց պատերազմ, Սարդարապատի ճակատամարտ, Արցախյան գոյամարտ): Նման ավանդույթները հասնում են դարերի խորքերը և համարվում ժողովրդի պատմական փորձի արտացոլում: Հասկանալի է, որ քաղաքական մշակույթի ոչ բոլոր տարրերն ունեն նման կայունություն: Ժամանակի ընթացքում քաղաքական մշակույթը փոփոխման է ենթարկվում, դրսևորվում է որպես որոշակի էվոլյուցիոն գործընթաց, սակայն դա երկարատև գործընթաց է, քանի որ կապված է քաղաքական գիտակցության և վարքի արմատացած կարծրատիպերի փոփոխման հետ:

Եթե անհատական և խմբային մակարդակներում քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես անհատների և խմբերի քաղաքական գիտակցության և վարքագծի մշակույթի միասնություն, ապա հասարակական մակարդակում լրացվում է միասնականացնող նոր բաղադրամասով՝ քաղաքական համակարգի և նրա ինստիտուցիոնալ կառուցվածքը կազմավորող գործառնության մշակույթով<sup>52</sup>: **Այս տեսանկյունից քաղաքական մշակույթը կարող է դիտվել որպես անհատների և խմբերի գիտակցության ու վարքագծի մոդելների մասին պատմականորեն ձևավորված, հարաբերականորեն կայուն և օրինակելի պատկերացումներ, համոզմունքներ, կողմնորոշումներ, ինչպես նաև քաղաքական ինստիտուտների ձևավորված համակարգի գործառնության մոդելներ:**

## Եզրակացություններ

Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ քաղաքական մշակույթը դինամիկ, զարգացող երևույթ է, որն արձագանքում է սոցիումում տեղի ունեցող փոփոխություններին, պատմական գործընթացներով հարստացնում է իր բովանդակությունը և դրսևորման ձևերը: **Պետք է նկատի ունենալ, որ քաղաքական մշակույթը ոչ քաղաքականություն է և ոչ էլ քաղաքական գործընթաց, այլ քաղաքականության աշխարհի, նրա գործառնության օրենքների և կարգերի վերաբերյալ որոշակի ընդհանրության (սոցիալական, քաղաքական, էթնիկական) համալիր պատկերացումներ:** Քաղաքականության բնագավառում նշանակություն են ձեռք բերում ոչ միայն պետության, քաղաքական կազմակերպությունների պրակտիկ գործողություններն ու միջոցառումները, այլև այն, թե ինչպես են դրանք գնահատվում, ընկալվում քաղաքացիների կողմից: Շատ դեպքե-

51 Տե՛ս **Рябов А. И.**, Чистяков В. Б. Политическая культура // Вестник московского университета. Сер. 12. Социально-политические исследования. 1994, N 1. с. 51.

52 Տե՛ս Политическая культура: Учебное пособие для академического бакалавриата. Под ред. Г. Д. Тульчинского. М., Юрайт, 2014. с. 77.

րում հենց քաղաքական մշակույթից է կախված տվյալ միջոցների իրականացման ձևերը, դրանց ընդունումը կամ չընդունումը բնակչության կողմից:

**Այսպիսով, քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես քաղաքական կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ տարաբնույթ պատկերացումների պատմականորեն ձևավորված ամբողջություն, որի մեջ ընդգրկվում են արժեքներ, նորմեր, կողմնորոշումներ, քաղաքական ինստիտուտներ, անհատների և խմբերի քաղաքական գործողության օրինակներ և եղանակներ, քաղաքական վարքագծի դրսևորումներ և այլն:** Մեկ անգամ էլ նշենք, որ քաղաքական մշակույթը քաղաքականության սուբյեկտիվ չափում է, քաղաքական աշխարհի կարևորագույն մաս: **Հենց քաղաքական մշակույթն է ապահովում քաղաքական իրողության ամբողջականությունը՝ միավորելով քաղաքական համակարգը, քաղաքական ինստիտուտները և գործընթացները՝ քաղաքական գիտակցության հետ, արժեքների, կողմնորոշումների, մոդելների, վարքի օրինակների և ձևի միջոցով:** Քաղաքական մշակույթը ազգային մշակույթի էական մասն է: Կապված է նրա հետ սոցիոմշակութային, ազգային-հոգեբանական, կրոնական ավանդույթներով, սովորույթներով, միջերով և իր վրա կրում է նրա ազդեցությունը:

**Լյուդվիգ Վարդանյան** – գիտական հետազոտությունների բնագավառը՝ քաղաքականության տեսություն, քաղաքական փիլիսոփայություն, քաղաքական գիտության մեթոդաբանություն, քաղաքական մշակույթ:

**Խաչիկ Ա. Մակյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է քաղաքական փիլիսոփայության, քաղաքական մշակույթին վերաբերող հարցերը:

## Summary

### **OBSERVATIONS ON THE ORIGIN AND INTERPRETATION OF THE TERM “POLITICAL CULTURE”**

Lyudvig G. Vardanyan  
Khachik A. Makyan

**Key words** – political culture, political system, political institution, politics, political consciousness, political orientation, political behavior.

The article deals with various questions of the origin and use of the term “political culture”, and the interpretation of the scientific concept. It presents the emergence of political culture, its separation as a kind of human culture associated with systemic knowledge about governance, policy and political life of society. The term “political culture” was first used by Johann Gerdeom in the second half of the 18th century, but in the modern Western political science literature it was first used by American political scientist Herman Finer. However, the theoretical basis and the complete concept of political culture

were presented by American political scientists Gabriel Almond and Sidney Verba in the 50-60-ies of the twentieth century. The paper attempts to introduce various interpretations of political culture systematically.

Резюме

## НАБЛЮДЕНИЯ О ПРОИСХОЖДЕНИИ И ТОЛКОВАНИИ ПОНЯТИЯ “ПОЛИТИЧЕСКАЯ КУЛЬТУРА”

Людви́г Г. Варда́нян  
Хачи́к А. Ма́кян

**Ключевые слова** – политическая культура, политическая система, политический институт, политика, политическое сознание, политическая ориентация, политическое поведение.

Рассматриваются различные вопросы происхождения и использования понятия “политическая культура”, разработки и толкования научной концепции. Представлено возникновение политической культуры, ее отделение в качестве особого вида человеческой культуры, связанное с системным знанием об управлении государством, политике и политической жизни общества. Понятие “политическая культура” впервые был использован Йоханом Гердеом во второй половине XVIII века, однако в современной западной политологической литературе его впервые использовал американский политолог Герман Файнер. Тем не менее, теоретическое обоснование и целостная концепция политической культуры были представлены американскими политологами Габриелем Алмондом и Сиднеем Вербой в 50-60-х гг. XX века. В работе сделана попытка систематизированно представить толкование политической культуры.